



## *Նուիրատուութիւն մը «Չարմանագան» արեւմտահայերէնի ճամբարին*

**«Melkonian Global Overture» կազմակերպութիւնը 11 կրթաթոշակ կը յատկացնէ**

«Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան Հայկական Համայնքներու բաժանմունքը Լոս Անճելըսի «Melkonian Global Overture» ոչ-շահութաբեր կազմակերպութենէն առատաձեռն նուիրատուութիւն մը ստացած է, որ պիտի յատկացուի այս ամառ «Չարմանագան» արեւմտահայերէնի ճամբարին մասնակցող երիտասարդներուն: Տասը հազար տոլարի նուիրատուութիւնը պիտի տրամադրուի տարբեր երկիրներէ (Լիբանան, Յունաստան, Միացեալ Նահանգներ, Թուրքիա, Գանատա եւ Ֆրանսա) եկող 11 համալսարանական ուսանողներու արձանագրութեան ծախսերը փակելու:

Հայկական Համայնքներու բաժանմունքը 2017-ին ձեռնարկեց «Չարմանագան» կրթական նախագծին, որ բաժանմունքի արեւմտահայերէնի ամրապնդման ծրագրին մաս կը կազմէ: Ան կը կազմակերպուի L'association Mille et un Mondes-ի (Լիոն, Ֆրանսա) եւ Institut National des Langues et Civilisations Orientales-ի (INALCO) (Փարիզ, Ֆրանսա) գործակցութեամբ: «Չարմանագան» ճամբարը վկայուած է Ֆրանսայի Երիտասարդութեան եւ Մարզանքի նախարարութեան կողմէ:

Այս տարի, «Չարմանագան»ը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի ֆրանքեզուիցերիական Ալպեան լեռներու շրջանին մէջ, 15 Յուլիսէն մինչեւ 9 Օգոստոս: Անոր պիտի մասնակցին 10-էն 15 տարեկան աւելի քան 50 պատանիներ եւ 16-էն 24 տարեկան 29 երիտասարդներ: Ճամբարը չորս երկիրներէ եկող 15 ուսուցիչներու յատուկ վարժընթացի բաժին մըն ալ պիտի ունենայ: Ամբողջ գործունէութիւնը հայերէնով կ'ընթանայ:

«Շատ երախտապարտ ենք այս աջակցութեան համար», յայտնեց Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանը: «Քաջալերական է տեսնել, որ նուիրատուները արդէն կ'ըմբռնեն «Չարմանագան»ի արժէքը՝ իրենց նիւթական նպաստը բերելով, որպէսզի երիտասարդ տղաք եւ աղջիկներ ճամբարին կարենան մասնակցիլ»: Արսինէ Շիրվանեանը՝ «Melkonian Global Overture»-էն, աւելցուց. ««Չարմանագան»ը հայերէնի ու հայ մշակոյթի փորձառութիւնը ապրելու նորարար, դրական ու ստեղծագործական հարթակ մըն



CALOUSTE GULBENKIAN  
FOUNDATION  
ARMENIAN COMMUNITIES

Է Լերիտասարդութեան համար: Որոշեցինք այս կրթաթոշակները տրամադրել՝  
Գրիգոր ու Կարապետ Մելգոնեաններու յիշատակին, ներշնչուելով անոնց  
բարեգործութենէն ու աշխարհասփիւռ հայերու կրթութեան օժանդակելու  
ցանկութենէն»:

Դիտեցէք [2017-ի «Զարմանազան»ի տեսագրութիւնը](#)՝ անցեալ տարուան  
գործունէութեան տեսողական ամփոփումի մը համար: